ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն
համայնք, հեռ.093475448,norashen.lori@mta.gov.am

N 30
21/02/2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու թիվ 4-Ն որոշումը՝ կից թիվ 2 հավելվածով:

Առդիր՝ 2 թերթ:

21.02.2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կապ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք, հասցե գ. Նորաշեն
հեռախոս 093475448

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » փետրվարի 2017 թվականի N 4 - Ն

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նորաշեն համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Նորաշեն համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բաղդասարյան Արայիկ			
Բաղդասարյան Իշխան			
Բաղդասարյան Վալերյա			
Էլոյան Արմինե			
Մարտիրոսյան Ռաֆիկ			
Մկրտչյան Մերուժան			
Ստեփանյան Վահան			

Նորաշեն համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու
2017թվականի փետրվարի 17-ի թիվ 4-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2016 թվականին Նորաշեն համայնքի զարգացման ծրագրով նախատեսված էր իրականացնել հետևյալ աշխատանքները՝

Կրթության բնագավառին աջակցություն
Մշակույթի, սպորտի զարգացում
Միջհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում
Խմելու ջրի ջրագծերի ներքին ցանցի նորոգումներ
Փողոցների լուսավորության բարելավում
Կեղտաջրերի հեռացում, աղբահանման կազմակերպում

Նորաշեն համայնքում 2016 թվականի ընթացքում իրականացվել են համայնքի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքները:

Կրթության բնագավառում՝ գյուղի միջնակարգ դպրոցի դասագրքերի վարձավճարների համար հատկացվել է 360.0 հազար դրամ, շրջանավարտներին միջցառումների կազմակերպման համար տրամադրվել է 100.0 հազար դրամ:

Գյուղատնտեսության բնագավառում՝ համայնքի բնակիչների կողմից գնված ցորենի սերմացուն, պարարտանյութերը տեղափոխվել են համայնքա պետարանի միջոցների հաշվին:

Մշակույթի, սպորտի բնագավառում՝ մշակույթի տան վերանորոգման աշխատանքների կատարման համար նախատեսված 2000.0 հազար դրամից կատարվել է 1860.0 հազար դրամի ներդրում, համայնքի բնակիչներ Տիգրան Բաղդասարյանին և Կարեն Ստեփանյանին բռնցքամարտի տարբեր մրցումների մասնակցելու համար տրամադրվել են դրամական միջոցներ:

Ջրամատակարարման համար նախատեսված 1000.0 հազար դրամից կատարվել են 500.0 հազար դրամի վերանորոգման աշխատանքներ, իսկ մնացած գումարը չի օգտագործվել անհրաժեշտություն չլինելու պատճառով:

Փողոցների լուսավորության և վերանորոգման աշխատանքների կատարման համար նախատեսված 1000.0 հազար դրամից ծախսվել է 480.5 հազար դրամ, մնացած գումարը չի օգտագործվել անհրաժեշտություն չլինելու պատճառով:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսված 1000.0 հազար դրամից ծախսվել է 1000.0 հազար դրամ, կատարել են ծրագրով նախատեսված համապատասխան աշխատանքներ:

Ճանապարհների բարեկարգման համար նախատեսված 2000.0 հազար դրամը ամբողջությամբ ծախսվել է, կատարվել են ծրագրով նախատեսված համապատասխան աշխատանքներ:

Աղբահանության կազմակերպման համար նախատեսված 1800.0 հազար դրամից ծախսվել է 800.0 հազար դրամ, 1000.0 հազար դրամը չի օգտագործվել, ձեռք չեն բերվել ծրագրով նախատեսված աղբամանները:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան